



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Սկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 06/11.1/505-14
« 04 » 02 2014 թ

Ձեռ № _____

ԷԿՈՆՈԳԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԻԼՎԱ ԱԴԱՄՅԱՆԻՆ

Հարգելի Սիլվա Ադամյան

Ի պատասխան Ձեր գրության հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1442-Ն որոշմամբ ստեղծվել է Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ, որը ի թիվս այլ գործառույթների իրականացնելու է նաև Սևանա լճի հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներ:

Միևնույն ժամանակ վերոնշյալ որոշման համաձայն Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի նախագիծը պետք է անցնի բնապահպանական և տնտեսագիտական փորձաքննություն, որոնց արդյունքները ամփոփելուց հետո միայն ծրագրի իրականացման նպատակահարմարության վերաբերյալ որոշում կկայացվի:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ